ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱՄԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7

ք. Երևան «25» 01 2022թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ատրիում Պրո Ստուդիո» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Ա. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀՀ Գեղարքունիքի մարզի (թվով 51 բնակավայրը ներառող 5 փաստաթուղթ) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 113 000 000 (մեկ հարյուր տասներեք միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները պայմանագրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 30%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման (հաշվետվության ներկայացման) ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	«ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ
ք. Երևան, հանրապետության հրապարակ	ք. Երևան Բաղրամյան 1 փկղ. 14$_2$, 12 բն.
կառավարական տուն 3	«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 220300122227000
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 00115353
Հ/Հ 900011030161	Տնօրեն՝
ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր բուհիտոր՝	
Լ. Մկրտչյան	Ա. Հակոբյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«25» 01 2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-1», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-2», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-5» և «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-6», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-7»

միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների

Աշխատանքի						
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	կատարման	
					հասցեն	ժամկետը
2	71241200/591	դրամ	113 000 000	1	ՀՀ Գեղարքունիքի մարզ	Համաձայն Հավելված N 1.1-ի, պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	
Գեղարքունիք-1, Գեղարքունիք-2, Գեղարքունիք-5 և Գեղարքունիք-6, Գեղարքունիք-7 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթեր	**Գեղարքունիք-1 Սևան քաղաք** (Գագարին գյուղ), Գեղամավան, **Դդմաշեն**, Զովաբեր, **Լճաշեն**, Ծաղկունք, **Ծովագյուղ**, **Նորաշեն**, **Չկալովկա**, Սեմյոնովկա, **Վարսեր** /11/ համայնքների տարածքները ներառող տարածքային հատակագծման և գոտևորման նախագծեր: **Գեղարքունիք-2 Գավառ քաղաք**, **Բերդկունք**, **Գանձակ**, **Գեղարքունիք գյուղ**, Լանջաղբյուր, **Լճափ**, Ծաղկաշեն, Ծովազարդ, **Կարմիրգյուղ**, **Հայրավանք**, **Նորատուս**, **Սարուխան** /12/ համայնքների տարածքները ներառող տարածքային հատակագծման և գոտևորման նախագծեր: **Գեղարքունիք-5 և Գեղարքունիք-6՝** **Գեղարքունիք-5 Վարդենիս- Վարդենիս քաղաք**, Այրք, Ներքին Շորժա, Վերին Շորժա /4/ բնակավայրերի տարածքները ներառող տարածքային հատակագծման և գոտևորման նախագծեր: **Գեղարքունիք-6 Գեղամասար-** Սոթք, Ազատ, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամաբակ, Գեղամասար, Դարանակ, Կախակն, Կութ, Կուտական /Զառիվեր/, Նորաբակ, Շատջրեք, Շատվան, Ջաղացաձոր, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ /18/ բնակավայրերի տարածքները ներառող տարածքային հատակագծման և գոտևորման նախագծեր: **Գեղարքունիք-7՝ Շողակաթ**, Արտանիշ, **Աղբերք**, **Դրախտիկ**, **Ծափաթաղ**, **Ջիլ** /6/ բնակավայրերի տարածքները ներառող տարածքային հատակագծման և գոտևորման նախագծեր: Նախագծերի մշակման հիմնական նպատակն է՝ ներառված համայնքներում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի

	ձևավորումը, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակումը: • Տարածքային հատակագծման մասով նախագծերը պետք է առաջարկեն տարածքների հատակագծային կազմակերպման և սոցիալ-տնտեսական զարգացման միջոցառումներ, ուղղված՝ - տարածքային զարգացման հիմնական ուղղությունների ընտրությանը՝ ներդրումների համար նպաստավոր ոլորտներ և գոտիներ, - արտադրության հիմնական ճյուղերի զարգացմանը, - ռեկրեացիոն ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, - շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանը, - ինժեներատրանսպորտային և սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքների զարգացմանը, - պատմամշակութային ժառանգության պահպանությանը, - տարածքի ինժեներական նախապատրաստմանը, - բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը: • Գոտևորման մասով պետք է կանոնակարգվեն՝ - բնակավայրերի և դրանց սահմաններից դուրս գտնվող կառուցապատման ենթակա հողերի նպատակային և գործառնական նշանակությունները, հողերի օգտագործման ռեժիմները, պարտադիր պահանջները, սահմանափակումները, - կառուցապատման հերթականությունը, - հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման ձևերը, - առկա քաղաքաշինական իրավիճակի կանոնակարգման և հեռանկարային կառուցապատման չափորոշիչները:
Նախագծման հիմնավորում և նորմատիվային պահանջներ	- ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-Լ որոշումը, - ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի «Քաղաքաշինության բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 531-Լ որոշումը, - Փաստաթուղթը մշակվում է ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ - ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի», - ՀՀ կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշմամբ հաստատված «Բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգի», - ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքները կառուցապատելու կանոնակարգման միջոցառումների մասին» N 2404-Ն որոշումը: - ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների տարածքներում քաղաքաշինական գործունեության իրականացման կարգը հաստատելու մասին» N 792-Ն որոշումը: - ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի

	պահանջները: - ՀՀՇՆ 20-04- «Երկրաշարժադիմացկուն շինարարություն.Նախագծման նորմեր» շինարարական նորմերի պահանջները: - 1998 թվականի մայիսի 5-ի «Քաղաքաշինության մասին» ՀՕ-217 օրենք, 2002 թվականի հունիսի 12-ի «Սեյսմիկ պաշտպանության մասին» ՀՕ-376-Ն օրենք, Կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 997-Ն որոշում
Միջոցառումների ցանկը	• Պատվիրատուն տրամադրում է 2021 թվականի դրությամբ հողային հաշվեկշիռները, կադաստրային քարտեզները՝ համապատասխան թեմատիկ շերտերով (հողօգտագործումները, հողատեսքերի սահմանները, ծածկագրերը, հողատեսքերն ըստ սեփականության ձևերի, փողոցային ցանցը, շենքերը շինություններն ըստ հարկայնության, ինժեներական ենթակառուցվածքների ուղեգծերը), տեղագրական հանույթները, համայնքներին վերաբերող այլ տվյալներ: • ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի համապատասխան ելակետային նյութերի հավաքագրում (բացակայության դեպքում մշակվում է նախագծողի՝ կատարողի կողմից), տվյալների վերլուծություն, • հենակետային հատակագծի մշակում ռիսկերի և սահմանափակումների նշումով, • տարածքային հատակագծման և տարածքների կազմակերպման հիմնական ուղղությունների առաջադրում, միջամտության ենթակա տարածքների ընտրություն, • համառոտ բացատրագիր, • գործառնական գոտևորման տարբերակի մշակում, • Նախագծի ներկայացում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, • շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության գործընթացին և հանրային քննարկումներին նախագծողների և պատվիրատուի մասնակցություն (պատասխանատու ստորաբաժանման), • նախագծային փաստաթղթերի փաթեթի նախապատրաստում և ներկայացում պատվիրատուին:
Նախագծի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջները	• Նախագծերը մշակվում են ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կազմով և բովանդակությամբ, • հողերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները ներկայացվում են յուրաքանչյուր համայնքի (բնակավայրի) համար առանձին, նախագծերի տեխնիկատնտեսական ցուցանիշները ներկայացվում են ինչպես առանձին համայնքների (բնակավայրերի) մասով, այնպես էլ միկրոռեգիոնի համար, • Տեքստային մասերը ներկայացվում են A4 ֆորմատով, Գրապալատ (GHEA Grapalat) տառատեսակով, տեքստի տառաչափերը՝ h=12 կամ h=10, աղյուսակները համապատասխանաբար՝ h=10, h=8, տողերի միջև հեռավորությունը 1.0 կամ 1.15: • Նախագծերը համաձայնեցման են ներկայացվում էլեկտրոնային տարբերակով՝ տեքստը՝ Microsoft Office Word, գծագրերը՝ AutoCAD և PDF ծրագրերով: • ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը ստացած նախագծերը կատարողի կողմից ներկայացվում են համապատասխան մարզպետներին հաստատման՝ մեկական էլեկտրոնային և մեկական թղթային տարբերակներով, • Հաստատված նախագծերը կատարողի կողմից հանձնվում են պատվիրատուին էլեկտրոնային կրիչներով (15-ական օրինակ), թղթային՝ առնվազն հենակետային, հիմնական և գոտևորման գծագրերը մարզպետարանի և յուրաքանչյուր համայնքի համար մեկական օրինակի հաշվարկով:
Մշակված տարածական պլանավորման փաստաթղթերի փորձաքննությունները	• Փաստաթղթերը կատարող կազմակերպության կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվում են ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության գործընթացը մեկնարկելու համար: • Փաստաթղթերը նախագծային կազմակերպության կողմից օրենսդրությամբ

	սահմանված կարգով ներկայացվում են քաղաքաշինական փորձաքննության եզրակացության: • Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննությունների եզրակացությունների ստացումն իրականացնելու է նախագծային փաստաթղթեր մշակող կազմակերպությունը: • Կատարողը մասնակցում է հանրային քննարկումներին և շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցման օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերին:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030161
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ
ք. Երևան Բաղրամյան 1 փկղ. 14շ, 12 բն.
«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220300122227000
ՀՎՀՀ 00115353
Տնօրեն՝

_____ Ա. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1.1
«25» 01 2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7 գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-1», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-2», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-5» ԵՎ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-6», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-7»
միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքների կատարման

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Աշխատանքների կատարման ժամկետը
1.	• Ելակետային նյութերի, այդ թվում՝ ինժեներաերկրաբանական, սեյսմաշրջանացման քարտեզների հավաքագրում (մշակում), տվյալների վերլուծություն, • Նախագծի ներկայացում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, • Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության գործընթացին և հանրային քննարկումներին նախագծողների և պատվիրատուի (պատասխանատու ստորաբաժանում) մասնակցություն. • Նախագծային փաստաթղթերի ներկայացում պատվիրատուին՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 150 օրացուցային օրվա ընթացքում: Մինչև նախագծային փաստաթղթերի հանձնումը միջանկյալ՝ 50 օրվա հաճախականությամբ ներկայացնել նախագծային փաստաթղթերը մշակման աշխատանքների ընթացքի վերաբերյալ հաշվետվություն:
2.	• Ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ պատվիրատուն և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամները ներկայացնում են իրենց դիտողությունները և առաջարկությունները՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ, 52-րդ և 54-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան:	Փաստաթղթերը ստանալուց հետո 50 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնում են դիտողություններ և առաջարկությունները:
3.	• Նախագծային կազմակերպության կողմից նախագծային փաստաթղթերի լրամշակում՝ հաշվի առնելով պատվիրատուի և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:	Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ պատվիրատուի և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկություններն ստանալուց հետո՝ լրամշակվում են 30 օրացուցային օրվա ընթացքում:
4.	• Ներկայացված լրամշակված փաստաթղթերի վերաբերյալ պատվիրատուն և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամները ներկայացնում են իրենց դիտողությունները և առաջարկությունները՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ, 52-րդ և 54-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան:	35 օրացուցային օրվա ընթացքում:

5.	• Կրկին լրամշակման անհրաժեշտության դեպքում փաթեթի (ներառյալ անհրաժեշտ փորձաքննությունների եզրակացությունները) վերջնական լրամշակում՝ հաշվի առնելով պատվիրատուի և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկությունները:	Նախագծային փաստաթղթերի վերաբերյալ պատվիրատուի և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված դիտողություններն ու առաջարկություններն ստանալուց հետո՝ լրամշակվում են 15 օրացուցային օրվա ընթացքում:
6.	• Ներկայացված լրամշակված փաստաթղթերի վերաբերյալ պատվիրատուն և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի անդամները ներկայացնում են իրենց դիտողությունները և առաջարկությունները՝ ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 49-րդ, 52-րդ և 54-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան:	35 օրացուցային օրվա ընթացքում:
7.	• Վերջնական լրամշակված փաթեթի վերաբերյալ ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը կազմելու նպատակով նախագծերը ներկայացվում են տեխնիկական բնութագրին համապատասխան, էլեկտրոնային տարբերակով, տեքստը՝ Microsoft Office Word, գծագրերը՝ AutoCAD և PDF ծրագրերով, հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների աղյուսակները PDF ձևաչափով:	Վերջնական լրամշակված փաթեթի հանձնում 15 օրացուցային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030161
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

Ա.Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ
ք. Երևան Բաղրամյան 1 փկղ. 14շ, 12 բն.
«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220300122227000
ՀՎՀՀ 00115353
Տնօրեն՝

Ա. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«25» 01 2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավե-րով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
2	71241200/591	ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-1», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-2», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-5» և «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-6», «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-7» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	-	113 000 000	113 000 000	113 000 000	113 000 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030161
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր տնտեսուհար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ
ք. Երևան Բաղրամյան 1 փկղ. 14շ, 12 բն.
«ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220300122227000
ՀՎՀՀ 00115353
Տնօրեն՝

_____ Ա. Հակոբյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
«25» 01 2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7 գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
«25» 01 2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7 գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

19 հունվարի 2022թ.
ք. Երևան

Թիվ 01-28

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 2230895021

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև կնքվելիք թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 11.300.000 (տասնմեկ միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսված օրերի քանակից առվազն իննսուն աշխատանքային օր ավել ժամկետով, սակայն ոչ ուշ, քան 01 հունիսի 2023թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման
գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ն. Նազարյան

Կատարող՝
Դավիթ Բարդության
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7091)

19 հունվարի 2022թ.
ք. Երևան

Թիվ 01-29

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 2230894308

(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից կնքվելիք թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 33.900.000 (երեսուներեք միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է տրման օրվանից մինչև կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսված օրերի քանակից առվազն իննսուն աշխատանքային օր ավել ժամկետով, սակայն ոչ ուշ, քան 01 հունիսի 2023թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/7» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վաճառքների խթանման և ռեգիոնալ կառավարման
գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ Ն. Նազարյան

Կատարող՝
Դավիթ Բարղության
Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7091)